



## ՆԵՐՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ ՄԱՅՐ ՏԱՇԱՐՈՒՄ (21 հունվար 1990 թ.)

«Յանուան Հօր և Որդու և Հոգոյն Սըրբոյ, ամեն:»

«Կթա, Տէր, ի հոգիս մեր Անջեցելոց»:  
«Ով Տէր, գթա մեր Անջեցրալների հոգի-  
ներին:»

Այսօր, հունվարի 21-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի հրահանգով Հայատան-  
յաց Եկեղեցին կամարների տակ ի Հայատան և ի այլուու աշխարհի կատար-  
վում է հոգեհանգատյան մասնավոր պաշ-  
տոն՝ վասն հոգլոցն նահատակաց, վկա-  
յից, որոնք ընկան հունվարի 15—19 օրե-  
րին Բաքվում, Շահումյանում և Գետաշե-  
նում: Մեր հոգիները ցնցված են ի տես Սորբեչանի ժողովրդական ճակատի «գորշ գայլերի» կատարած սովորակի: Եվ տարվում ենք մտածելու, որ 1915 թվա-  
կանին Ալվագած ցեղադասանությունը դեռևս շարունակվում է: Կարծեք թե 20-րդ դարը հայ ժողովրդի վրա գործադրվող եղեննի, արյունահեղության դարս է: Անցյալ շաբթը-  
վա օրերին, միրելի համատացալներ, Սորբեչանուն, հատկապես Բաքվում, Շա-  
հումյանում և Գետաշենում ավելի քան հարյուր (ճիշտ թիվը Աստված գիտե) անմեղ հայեր, պարզապես հայ լինելու պատճառով գոհկեցին ժողովրդական ճա-  
կատի սանձարձակ եղուակների ձեռքով: Նրանք դարձան հայ ժողովրդի վկաները և հայ ժողովրդի արդարության կանչը առ Աստված բարձրացրին իրենց նահատա-  
կությամբ: Աստված ևս ասես ցնցվեց, ի-  
շավ և մարդկանց խիղճը շարժեց: Այդ իսկ պատճառով, երբ ժողովրդական ճակատի վայրագությունները գլեցին-անցան մարդ-  
կային մտածովության սահմանները, վրա

հասավ արդարությունը, խորհրդավիճ բա-  
նակները իշան դեպի հարավ՝ ձգտեղով խաղաղություն հաստատել Սարբեցանի մեջ: Այդ իրադարձության հետևանքով ժո-  
ղովրդական ճակատի մարդիկ ևս զոհվե-  
ցին: Խմ մտածութիւն այժմ թոշում-գնում է մոտ 90 տարի դեպի ետ՝ հիշատակերու համար Խրիմյան Հայրիկի հետ պատահած դեպքը, երբ համբոյան շարդերից հետո Վանից եկող մի հայ քահանա ներկայա-  
նում է Հայոց Հայրիկին Վեհագանուն: Նա,  
նոգով, արտով փշրված, ամրող իր ընտա-  
նիքը կորցրած, լացակումած աչքերով Խրիմյան Հայրիկի առջև ծնկի է գալիս և  
ասում: «Հայրիկ, ես սգալող եմ, եկել եմ,  
որ միհթարես իմ՝ որովհետև կորցրել եմ  
ամրող ընտանիքս, ոչ մի ժառանգ չունեմ  
և մնացել եմ անտեր ու անտիրական»:  
Խրիմյան Հայրիկը ոտքի է կանգնում և դի-  
մերով քահանային՝ ասում է. «Ոտքի ել,  
քահանա հայր, դու ք ընտանիքը ես  
կորցրել, ես ամրող իմ ժողովուրդն եմ  
կորցրել, հաշվիր, թե քանի-քանի տաս-  
ենակներով մարտ է զոհված, բոլորն ել իմ  
զավակները: Ես միթե քեզանից ավելի  
սգալող չեմ: Հիմա ես ծնկի եմ զալու, և  
դու իմ միհթարության աղոթք կարդա»:

Սիրենի հավատացյալներ, մեր արտերը,  
Հայոց Վեհափառ Հայրապետից սկսած,  
այս օրերին ցավով են լցված: Անցյալ շա-  
բաթվա ընթացքում Մոսկվայում տեղի ու-  
նեցալ շրջակա միջավայրի մաքրության և  
կենապահպանության հարցերին նվիր-  
ված մի կարևոր ժողով, որին ես ևս մաս-  
նակցում եի: Այստեղ, թեական է, ժողովի  
մասնակիցներին մտանող ամենահրա-  
տապ հարցը Բաքվի, Շահումյանի Գետա-

շենի մեջ կատարվող աղետալի իրադարձությունների հարցն էր: Մի բանատեղ, արտասահմանից եկած, իր խոսքի մեջ հանկարծ պոռթևաց. «Մինչև ե՞ր, մինչև ե՞ր հայ ժողովորդը ցեղասպանության զի՞ պիտի դառնա, և արդարություն պիտի տեղի չունենա»: Կարծես Աստված լեց երա ձայնը: Հաջորդ օրը խորհրդաշխ բանակները եկան Բաքու՝ անտեղ կարգ ու կանոնը, խաղաղությունը վերահստատելու համար:

Միրեկի եղբայրներ և քուրեր, մենք այսօր աղործում ենք մեր համատակների, մեր վկաների, մեր զոհված եղբայրների և քուրերի համար, մոմ ենք վառում, խունկ ենք ծխում, մեր աղերսն ենք բարձրացնում առ Աստված, որ մեր ձայնը լսի, ընդունի հրամաց հոգիները խաղաղությամբ և իր թագավորության մեջ բնակեցնի մեր բոլոր զոհվածներին: Նաև մեր աղործն է, որ Աստված իր Սուրբ Հոգու միջոցով միփառություն պարզելի հայ ժողովորդին և բոլոր հրանց, որոնք իրենց կորցրած հարազատների կակիծն են ապրում այս օրերին: Համավանդ մեր աղործը, սիրեկի հավասարցալներ, առարում ենք առ Ամենա-

բարձրյալ՝ խնդրելով, որ մարդկանց սըրտի և իմացականության մեջ ծագեցնի արդարության, մարդասիրության, եղբայրության լույսը, որպեսզի մարդիկ կարողանան այս կանքը վայելել իրեն եղբայրներ, ապրել իրեն հարազատներ միմյանց հետ: Խնկի և աղործի այս պահին մեր մաղթանքն է, որ Աստված հայ ժողովորդի ձայնը լսի, բոլոր փակ դռները բացվեն, քարացած սրտերը փափկեն, և հայ ժողովորդը կարողանա իր արդար երազներն իրականացնել այս աշխատի վրա:

Մեր ընդհանուր մաղթանքն է նաև, որ Աստված խաղաղ ու հանդարտ պահի մեր երկիրը, մեզ շնորհի իմաստություն, որպեսզի, ինչպես ժողովրդական առածա է ասում, հազար անգամ մտածենք և մեկ անգամ կորենք, որպեսզի ինչ որ կորենք, սխալ չլինի, և հետո դրա համար չգոջանք:

Թող Աստուծո խաղաղությունը իշնի մեր համատակների հոգիների վրա, և Սուրբ Հոգին զա մեզ բոլորին միմիթարելու և մեր կանքը ապահով, խաղաղ նավահանգիստներ հասցնելու, այժմ և հավիտյան հավիտենից. ամեն:

